ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ներկայացված հոդվածը պետք պետք է կառուցված լինի IMRAD ձևաչափով՝

- I - Introduction - Ներածություն
- M - Methods - Մեթոդներ/Մեթոդաբանություն
- R - Results - Արդյունքներ/Եզրակացություն
- A - and - և
- D - Discussion - Առաջարկություններ

Հոդվածի վերնագիրը, **համառոտագիրը**, **հիմնաբառերը**, **հեղինակի անունը**, **ազգանունը**, **հայրանունը**, **գիտական աստիճանը և կոչումը անհրաժեշտ է ներկայացնել երեք լեզուներով՝** հայերեն, ռուսերեն և անգլերեն, տրվում է նաև հեղինակի էլ. հասցեն, հեռախոսահամարը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքում ներկայացվում են գիտական այն արդյունքները, որոնք առավել առաջնահերթ են տվյալ ոլորտում և երբևէ հրատարակված չեն եղել: Աշխատանքում պարտադիր են հետևյալ բաժինները.

- համառոտագիր (ABSTRACT),
- հիմնաբառեր (KEYWORD),
- ներածություն (INTRODUCTION),
- գրականության ակնարկ (LITERATURE REVIEW),
- հետազոտության մեթոդաբանություն (RESEARCH METHODOLOGY),
- վերլուծություն (FINDINGS, ANALYSES),
- եզրակացություններ (CONCLUSIONS),
- գրականություն (REFERENCES):

Նշված բաժինները վերնագրերով առանձնացնելը պարտադիր է: Անհրաժեշտության դեպքում հոդվածի բովանդակությունը կարող է բաժանվել առանձին բաժինների՝ իրենց ենթավերնագրերով:

1. **Համառոտագիր**: Համառոտագրում եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, ներկայացվում են հետազոտության հիմնական բովանդակությունն ու ստացված արդյունքները (մինչև 200 բառ):

2. **Հիմնաբառեր**: ոչ ավելի, քան 5 բառ:

3. **Ներածություն**: Ներածության մեջ ակնարկ է կատարվում ընտրած թեմայի՝ վերջին տարիների գիտական գրականության վերլուծությանը, թեմայի արդիականությանն ու նպատակին:

4. **Գրականության ակնարկ**: Կատարվում է հետազոտության թեմայի վերաբերյալ գիտական գրականության վերլուծություն: Ներկայացվում են այն հիմնական ուղղությունները, որոնք զարգացրել են այլ հետազոտողներ՝ տվյալ թեմայի ուսումնասիրության շրջանակում:

5. **Հետազոտության մեթոդաբանություն**: Ներկայացվում է հետազոտության մեթոդաբանությունը՝ հիմնավորելով վերջինիս ընտրության անհրաժեշտությունը:

6. **Վերլուծություն**: Բացահայտվում են հետազոտության օբյեկտի օրինաչափությունները, միտումները, զարգացման ուղղությունները, խոչընդոտները և այլն, որոնք ձևավորում են հետազոտության հիմնական արդյունքները:

7. **Եզրակացություններ**: Հետազոտության հիմնական արդյունքների համառոտ նկարագրություն:

8. **Զեկույցի հիմնական պահանջները՝**

Տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, էջի չափը՝ A4, լուսանցքները՝ ձախից՝ 3 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2 սմ, հղումները՝ տողատակում, ըստ հետևյալ հաջորդականության՝ աղբյուրի հեղինակ, վերնագիր, հրատարակության վայր, տարեթիվ (պարբերականի դեպքում՝ նաև համար) և էջ:

Հոդվածի հրապարակման չափանիշներ՝

Գիտականություն՝ հրապարակման մեջ գիտական քննարկման տարրերի բավարար առկայություն:

Օրիգինալություն՝ աշխատանքում ներկայացված արդյունքները չպետք է հայտնի լինեն և նախկինում հրապարակված, իսկ մեթոդները՝ նախկինում կիրառված:

Արդիականություն՝ զեկույցում նկարագրված գաղափարների, մեթոդների կարևորությունը, օգտակարությունը և կիրառելիությունը:

Որակ՝ զեկույցի գիտական, տեխնիկական և/կամ մեթոդական ներդաշնակություն, արդյունքների և հղումների ճշգրտություն և ստուգելիություն, ըստ որոնց հնարավոր կլինի ճշմարիտ ապացույցներ գտնել: